

մարտում: Զրիստոսին մի օր փրկել է քօխել էր հռչակում: միս օրը մարդ, մի այլ ժամանակ երկրորդ Բուդդա ելին: Յամենայն դէպս այժմ դժուար է նրա մասին ճշմարտութիւնը լսել նոր Միքսիքայում ուր քաղմութիւ առաւապելներ են հիտուել նրա անունով: հասնօրէն այդ մարդը խելագարուած մոնուման էր:


Մ ո ն ա ք ս յ ի խ ա ղ ա ռ ա ն ի հ ա շ իւր: Էիչ մարդ կայ որ Մանոքայի խաղարանի անունը լսած չը լինի. այդ փոքրիկ իշխանութիւնն կենդրոն է նորագոյն քաղաքակրթութեան ամենայն կրքերի եւ յանցանքների: Ամենայն տարի այնտեղ իրեանց կարողութիւնը տանու են տալիս հարկւարտը մարդիկ եւ ապա յուսարատութիւնից անձնասպան լինում: Ետադարանի հաշուից երեւում է, որ այս տարի զուտ արդիւնք է տուել 13 միլիոն ֆրանկ: Ամառը արդիւնքն 50 միլիոն է եղել, սակայն դրանից ծախսուել են իշխանին տալիք հարկի եւ քաղաքի զուարմութիւնների համար մեծ գումարներ:

Այս ծախքերի մէջ հետաքրքրական է եւ այժմեան ֆրանսիացի համար որոշիչ այն հանգամանքը, որ մեծ գումար է նշանակած ֆարիզու թերթերին իրեն կաշառ խաղարանի շուրջը կատարածները մասին լուրուայսպէս «ֆիզարոն» այդ քանի համար ամսական 3000 ֆրանկ է ստանում, իսկ միս թերթերն անելի պակաս. կան ամսական 250 ֆրանկ ստացողներ եւ:

Բ ա ր ծ ր կ ը թ ու թ ե ա ն հ ա մ ե մ ա տ ա կ ա ն տ ո կ ո ս ք Գ ե ր մ ա ն ի ա յ ու մ ք ս տ ու ա լ ա ն ու թ ե ա ն ց: Գերմանական կայսերութեան մէջ 10,000 քնակչի վրայ 50 ըարձրագոյն կրթութեան ուսանող է գալիս: Բողոքական 10,000 քնակչի վրայ գալիս է 55 ուսանող, 10,000 կաթողիկէն 32, ի ս կ 10,000 հրէի ն 333:

Գերմանական 6 մեծ տէրութիւնների մէջ հետեւեալ յարաբերութիւնները կան. Բաւարիայում 10,000 կաթողիկէ վրայ գալիս է 42 ուսանող, 10,000 բողոքականների վրայ 67, 10,000 հրէին 370: Պրուսիայում 10,000 կաթողիկէ վրայ 27 ուսանող է հաշուում, 10,000 բողոքականին 50, իսկ 10,000 հրէին 333: Վիրաէմբերգում յարաբերութիւններն հետեւեալներն են. 53 կաթողիկէ, 93 բողոքական, 590 հրեայ ուսանող ամէն մի 10,000 քնակչին: Բադենում հետեւեալ յարաբերութիւններն են. 41, 86, 417. Հեսսսէնում. 50, 67, 333. Սաքսոնիայում 23:

40, 357: Ահա թէ ինչու գերմանական գիտութիւնը, գրականութիւնն եւ մանասանդ մամուլը անելի հրէական է քան տեստոնական:



Ա Ձ Գ Ա Յ Ի Ն .

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ե Մ Ն Դ Ի Ր .

Ահա լրացաւ երկրորդ տարին այն օրուանից, երբ Սասնոյ ահաւի կոտորածի լուրն աշխարհ գորդեցրեց, բայց ինչ շահեցաւ արդեօք խեղճ հայ ժողովուրդն այդ գրգռելից: Պատմութեան մէջ անլուր և չը տեսնուած գործեր կատարուեցան այս երկու տարուան ընթացքում: Զրիստոնեայ պետութիւնները Սասնոյ կոտորածն ստուգեցին, պարտք համարեցին այդպիսի գազանութիւնների դէմ բողոքելու և առիթ եղան հայ ազգի ջնջման բարկորդ դնելուն: Վէց հարիւր տարի հայը կրել էր թուրքի լուծը և արեան մէջ թաթաւելով պահպանել իւր ոգորմելի գոյութիւնը, բարբութեան մէջ ապրելով արժանաշիլ էր նա վերջագէս որոշ հաւատարմութեան հրաշակի և վարում էր ստրկի կեանք, յանկարծ այդ հաւատարմութիւնը կոսկածի տակ ըսկաւ առանց հայի մեղքի և նա տուժեց հարիւր հազարաւոր զոհերով:

Զրիստոնեայ աշխարհի բոլոր ջանքերը ճնեցին մեռեալ բարենորոգումների որ սկսուեցան տմարդի կոտորածներով և վերջանում են ահա երկրի ամայնալով: Այս երկու տարուան ընթացքում շատ խօսուեցաւ և զորուեցաւ հայոց մասին, բայց իսկական ճշմարտութիւնը երեւան չեղաւ:

Հայկական խնդրի վերջին ծագմանից մինչև մեր օրերը այդ խնդրին մի շատ մօտիկ անձնաւորութիւն հետեւեալն ասաց:

«Հայերին մեղադրում են որ նրանք ապրատամբ են, որ նրանք յեղափոխական շարժումներ են գործում, որ նրանք գործիք են այլ ազգերի, բայց այդ ամէնն ևս սխալ է. հայ-

կական խնդիրը յարուցել է ինքը տաճիկն եւ այժմ՝ կամենում է արեան մէջ խեղդել հային եւ նրա խնդիրը:

Մի կողմը թողնելով այն՝ որ ամենայն ճշուեմն ընդդիմութիւն է յառաջ բերում ամենայն հալածանք ապստամբութիւն է ծնեցնում պատմական փաստ է, որ 1878 ին տաճիկն ինքն ստեղծեց հայկական խնդիրը: Երբ Բեռլինի վեհաժողովում պիտի վճռուէր արեւելեան քրիստոնէից վիճակը, հայ եպիսկոպոսներ գնացին Երուսալ, ամենուրեք հայցեցին ազատութիւն հայերի համար եւ տաճիկ կառավարութիւնը շարժեց այդ շարժումը, նա թող տուաւ որ իւր հպատակ եպիսկոպոսներ թողոքեն իւր դէմ, հայոց պատրիարքը հարիւրատը քառերից քաղկացած թողոքներ հեռագրէ Կ. Պոլսից առ իւր պատուիրակներն: Ոչ այս չափ միայն, երբ այդ բողոքաւոր պատուիրակները յետ դարձան Կ. Պոլիս նրանց հարցնող անգամ չեղաւ, թէ ո՞ր էին գնացել և ի՞նչ էին արել: Հաստատ պատմական իրողութիւն է, որ սուլթանը դժգոհ այդ գործից՝ մեծ վեզիրին պատասխանատուութեան կանչեց, որ պատասխանեց, Վեհափառ Տէր, այն ժամանակ պէտք էր մեզ որ հայերն էլ ազատութիւն ուզէին, որպէս զի խանգարէինք բողոքների ազատութեան իսկ այժմ ո՞վ է մեզ ստիպողը բարենորոգումներ մտցնելու, եթէ հարկ լինի հայկական խնդիրը վերացնելու, այդ մեզ համար շատ զիւրիւն է միշտ խոստանալ բարենորոգումն և երբէք չըկատարել:

Այժմ ինչպէս երևում է եկել է ջրնջման շրջանը և պէտք է խոստովանել որ առճիշդ մեծ ճարտարութեամբ լրացնում է իւր ծրագիրը, մինչ եւրոպայի քրիստոնեայք միմեանց են վերագրում հայկական խնդրի ծագեցնելը: Հայոց խնդիրը ոչ մի եւրոպական պետութեան ինտրիզ չէ, նորան ծնել է տաճիկը...: Այս ծանրակշիռ փաստաբանութիւնը հերքում է այն սովորական մեղադրանքները, որ բարդուում են մի կողմից հայոց, միւս կողմից եւրոպայի ազգերից մանաւանդ Անգլիացւոց դէմ: Քրիստոնէից կոտորածի պատասխանը Միջին դարերում անշուշտ խաչակրաց արշաւանք կը լինէր. իսկ այժմ այժմ սուլթանը Կ. Պոլսի կոտորածի երկրորդ օրն պարգև է ստանում Եւրոպայից...:

Մի Արևելագէտ եւրոպացի ճիշդ նկատում է այս առթիւ թէ ի՞նչ կանէր միացեալ իսլամութիւնը, եթէ երկրիս մի անկիւնում այն խայտառակութեան ենթարկուէր իսլամութիւնը, որպիսի խայտառակութեան

ենթարկուում է այսօր քրիստոնէութիւնը Հայաստանում: Միթէ յակամայից պիտի խոստովանենք որ իսլամն աւելի բարոյական զօրութիւն ունի, քան ներկայ քրիստոնէութիւնը:

Քաւ և մի լիցի: Հայերս հաւատացող ժողովուրդ ենք և երբ ամենայն օր աղօթելով ասում ենք, «եղիցի՛ն կամք քո», զիտենք որ ԾՈՐԱ կամքը բարի է և բարի էլ կը լինի:

Բայց «մինչև ցերբ Տէր», այս է մեր մարդկային անհամբերութեան արտայայտութիւնը, որ երկու տարի է ի վեր արեւն արտասուքով կրկնում ենք: 1895-ին կոտորածներից այժմ յաջորդում են 1896-ի աւելի սուկայի կոտորածները, արդէն իսկ սկսուել է երկրորդ կոտորածը, որ անհամար զոհեր է տարել Կ. Պոլսում: Ահում, նեսարիայում և Վանում ամենայն օր նոր նոր կոտորածների լուրեր են ստացուում իսկ մեր աչքերի առաջ մեռնում են տնանկ և հալածական գաղթականները...:

Երկիրը քարուքանդ, ժողովուրդը մարթուած և ցիր ու ցան, եկեղեցիք այրուած և վանքերը կործանուած, քահանայք ու առաջնորդք սպանուած, պատրիարքն աքսորական և Սուրմակն անգամ գորուած, ի՞նչէր արդեօք սրա վերջը, Տէրն ինքնին միայն զիտէ և սուրբ է նորա կամքը. իսկ մենք համոզուած ենք, որ մեզ հետ եղող ճշմարտութիւնը պիտի փրկէ մեր

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ. ՄԱՅՐ ԱԹՈՒ.

ԳՈՂՏԵՒ ԻՈՐԸՐԱՎԱՆ Ա. Ն. ՄՈՍՈՒՍԳԻ ԵՒ ԻՇԽԱՆ Ե. Է ՈՒՆՏՈՄՄՈՒ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ.

Ըմտոյ 14-ին՝ շարժած օրը Վեհափառ Հայրապետ հեռագիր ստացաւ օտար գաւանթեանց վարչութեան տեսուչ գաղտնի խորհրդական պ. Ա. Ն. Մոստոլովից, որ արդէն ժամանել է Թիֆլիզ և յոյս ունի երեքշաբթի կամ չորեքշաբթի ներկայանալ Նորին սուրբ Օծութեան Եջմիածնում: Նոյն օրն հեռագիր ստացաւ և Վրաստանի ու Իմերեթի առաջնորդ բարձր սրբազան Գէորդ արքեպիսկոպոսից, որ բարձրաստիճան հիւրերն այցելութեան գալով Նորին Սրբազնութեան, միասին գնացել են ի տես վանքի մայր եկեղեցու, Ներսիսեան հոգևոր դպրանոցին և փակուած Գայիսեան ու Յովնանեան դպրոցներին. ապա սրբազան առաջնորդ փոխ այցելութեան գնալով կիրակի օրուան ճաշի է հրաւիրել Պետերբուրգից ժամանած հիւրերին, որոնց սեղանակից պիտի լինին վարչական բարձրաստիճան անձինք և անուանի քաղաքացիք, Պարոն Մոստոլովն և իշխան Աւետիսեան կիրակի զիշեր Թիֆլիզից ուղևորուելով երկուշաբթի երկկոյնեան հանում են Երևան, ուր ընդ առաջ էր ուղարկուած Վեհափառ Վաթուղիկոս կողմից Կեր. Պարապետ եպիսկոպոսը: